Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

10241
10242
10243
10244
10245
10246
10247
10248
10249

Ավ. Իսահակյան

[illegible]

891.99
Ի-75

Գիրք 1911

ԾԱՂԿԱՔԱՂ

ՅՕՏԱՐԱԶԳԻ ՔԵՐԹՈՂԱՑ

Գ.

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

ԿԱՐԱՊԵՏ ԳԱՐԱԳԱՇ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Պ. ՓԻՐԻՃԵԱՆ
[illegible]
— 1880 —

8-1

ԾԱՂԿԱՔԱՂ

ՅՕՏԱՐԱԶԳԻ ՔԵՐԹՈՂԱՑ

Գ.

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

ԿԱՐԱՊԵՏ ԳԱՐԱԳԱՇ

LE TOMBEAU D'UNE MÈRE

Un jour, les yeux lassés de veilles et de larmes,
Comme un lutteur vaincu prêt à jeter ses armes,
Je disais à l'aurore: «En vain tu vas briller;
La nature trahit nos yeux par ses merveilles;
Et le ciel, coloré de ses teintes vermeilles,
Ne sourit que pour nous railler.

«Rien n'est vrai, rien n'est faux; tout est songe et mensonge,
Illusion du cœur qu'un vain espoir prolonge.
Nos seules vérités, hommes, sont nos douleurs,
Cet éclair dans nos yeux que nous nommons la vie,
Etincelle dont l'âme est à peine éblouie,
Qu'elle va s'allumer ailleurs!

«Plus nous ouvrons les yeux, plus la nuit est profonde.
Dieu n'est qu'un mot rêvé pour expliquer le monde,
Un plus obscur abîme où l'esprit s'est lancé;
Et tout flotte et tout tombe, ainsi que la poussière
Que fait en tourbillons dans l'aride carrière
Lever le pied d'un insensé!»

ԳԵՐԵԶՄԱՆ ՄՕՐ

ՆՈՒԷՐ

ԱՌ ՄԵԾԱՊԱՏԻՒ ԳՐԻԳՈՐ ԷՖԷՆՏԻ ՆՇՕՂԵԱՆ

Օր մի, 'ի տքնութեանց եւ յարտասուաց աչք իմ խոնջեալք,
Իբրեւ զըմբիշ յաղթահարեալ կազմ յընկենուլ ըզզէնսն 'ի բաց,
Ասէի ցարշալոյս. «Տարապարտուց փայլեսցես դու.
«Խարդաւանէ զաչըս մեր բնութիւն իւրովքն ըսքանչելեօք.
«Եւ երկին՝ ծիրանեփեան ներկեալ գունոցըն երանգովք,
«Սոսկ 'ի հեգնել ըզմեզ ժըմտի։

«Ձի՛ք ճշմարիտ ինչ, չի՛ք պատիր. երազ եւ սուտ է ամենայն.
«Սըրտի խաբէութիւնք զորս յերկարէ ընդունայն յոյս։
«Ցաւք մեր, մահկանացուք, են մեր միայն ճըշմարտութիւնք.
«Փայլակն այն յականողիս մեր զոր անուն կոչեմք մեք կեանս,
«Կայծ՝ յորմէ հոգւոյս մերոյ դեռ այն ինչ շըլացեալ
«Եւ այլ ուրեք երթայ վառել։

«Որչափ մեք զաչըս բանամք՝ այնչափ գիշերն է խաւարին.
«Աստուած է յերազեալ լոկ բառ՝ զաշխարհ առ 'ի մեկնել.
«Նըսեմագոյն անդունդք խորոց ուր խոյացեալ հոսեցան միտք.
«Եւ բնաւք ծըփին տարուբեր, բնաւք անկանին որպէս փոշի
«Զոր յասպարէզ անջըրդի յարուցանէ փոթորկելով
«Յիմարն ոտիցն 'ի գարշապարս։»

Je disais; et mes yeux voyaient avec envie
Tout ce qui n'a reçu qu'une insensible vie,
Et dont nul rêve au moins n'agite son sommeil;
Au sillon, au rocher j'attachais ma paupière,
Et ce regard disait: A la brute, à la pierre,
Au moins que ne suis-je pareil?

Et ce regard, errant comme l'œil du pilote
Qui demande sa route à l'abîme qui flotte,
S'arrêta tout à coup, fixé sur un tombeau;
Tombeau, cher entretien d'une douleur amère,
Où le gazon sacré qui recouvre ma mère
Grandit sous les pleurs du hameau!

Là, quand l'ange voilé sous les traits d'une femme
Dans le Dieu sa lumière eut exhalé son âme,
Comme on souffle une lampe à l'approche du jour;
A l'ombre des autels qu'elle aimait à toute heure,
Je lui creusai moi-même une étroite demeure,
Une porte à l'autre séjour!

Là dort dans son espoir celle dont le sourire
Cherchait encor mes yeux à l'heure où tout expire,
Ce cœur, source du mien, ce sein qui m'a conçu,
Ce sein qui m'allaita de lait et de tendresses,
Ces bras qui n'ont été qu'un berceau de caresses,
Ces lèvres dont j'ai tout reçu!

Ասէի այսպէս. եւ աչք իմ հայէին նախանձաբեկք
Յամենայն որ ընկալաւ լոկ զանըզգայ կենդանութիւն,
Եւ զորոց ոչ մի բընաւ երազ դէթ ոչ խռովէ ըզքուն.
Յակօսն՝ 'ի քարաժայռ յառէի զբիբս իմ անքըթիթ,
Եւ հայեցուածն այն առէր. «Ընդէ՞ր վիմին եւ անբանին
«Գոնեա չիցեմ ես հանգունակ :»

Եւ հայեցուածն այն այսր անդր յածեալ՝ որպէս նաւուղղին աչք
Որ հարցանէ զճանապարհէն երերածուփ խորոց ծովուն,
Յանկարծոյն էառ ըզկայ, ակընկառոյց 'ի գերեզման.
Գերեզման, սիրատոչոր ճարակ ցաւոյըն դառնութեան,
Ուր սըրբազանն այն դեղ դալար որ զիմըս մայր պարածածկէ,
Ընդ արտասուօք աճէ շինին :

Անդ՝ երբ հրեշտակն ընդ կընոջ կերպարանօք պատրըւակեալ՝
ՅԱստուած, 'ի լոյսն իւր, փըչեաց զհոգին իւր արձակեաց,
Որպէս յայգուն 'ի մերձենալ անցուցանէ ոք ըզկանթեղ.
Ընդ հովանեաւ սեղանոց՝ զորըս սիրէր նա հանապազ՝
Պեղեցի ես ինքնին նըմա անձուկ բընակութիւն,
Դըրունս 'ի միւսն այն օթեւան :

Անդանօր՝ յիւրն 'ի յոյս 'ի քուն լինի նա՝ ոյր ժըպիտ
Դեռ խընդրէր զաչս իմ, 'ի ժամուն յոր ամենայն անշընչանայ,
Սիրտն այն, իմում սըրտիս աղբիւր, ծոցն այն որ զիսըն յըղացաւ,
Ծոցն այն՝ որ 'ի կաթն եւ 'ի գորով զիս դիեցոյց,
Բազուկք, որ գըգուանաց եւեթ եղեն ինձ օրօրան.
Շըրթունք՝ ուստի զընաւս ընկալայ :

Là dorment soixante ans d'une seule pensée,
D'une vie à bien faire uniquement passée,
D'innocence, d'amour, d'espoir, de pureté;
Tant d'aspirations vers son Dieu répétées,
Tant de foi dans la mort, tant de vertus jetées
En gage à l'immortalité,

Tant de nuits sans sommeil pour veiller la souffrance,
Tant de pain retranché pour nourrir l'indigence,
Tant de pleurs toujours prêts à s'unir à des pleurs,
Tant de soupirs brûlants vers une autre patrie,
Et tant de patience à porter une vie
Dont la couronne était ailleurs!

Et tout cela, pourquoi? Pour qu'un creux dans le sable
Absorbât pour jamais cet être intarissable;
Pour que ces vils sillons en fussent engraissés;
Pour que l'herbe des morts dont sa tombe est couverte
Grandît, là, sous mes pieds, plus épaisse et plus verte!
Un peu de cendre était assez!

Non, non! pour éclairer trois pas sur la poussière,
Dieu n'aurait pas créé cette immense lumière,
Cette âme au long regard, à l'héroïque effort!
Sur cette froide pierre en vain le regard tombe,
O vertu! ton aspect est plus fort que la tombe,
Et plus évident que la mort.

Անդ հանգչին վաթսուն ամք մէն միայնոյ մըտածութեան,
Կենաց անցելոց առ 'ի գործել լոկ ըզբարին,
Կենաց անմեղութեան՝ սիրոյ՝ յուսոյ եւ մաքրութեան.
Ա՜յնքան բաղձանաց խղճք առ Աստուածն իւր յեղյեղեալք,
Այնքան հաւատք առ 'ի մահ, եւ լաւութիւնքն այնքանիք
Անմահութեան արկեալք 'ի գրաւ։

Այնքանի՜ գիշերք անքունք մաշեալք ցաւոց 'ի հըսկութիւն,
Այնքան հաց խընայեալ յանձնէն 'ի ջամբ կարօտելոց,
Այնքան արտասուք միշտ կազմք խառնել ընդ արտասուս,
Այնքան բոցակէզ հառաչք առ այլ իմն հայրենիս,
Եւ այնքան համբերութիւն առ 'ի տանել ժուժել կենաց.
Որոյ պըսակն իւր էր այլուր։

Եւ ըզմէ՞ այդ ամենայն. որպէս զի խորշ ինչ յաւազի
Կըլցէ՞ յաւիտեան զանհատահոսըն զայն էակ.
Զի ակօսք այդոքիկ անարգք նովաւ պարարտասցին.
Զի խոտ մեռելոց որով ծածկի իւր գերեզման՝
Աճեսցի՜ անդ ընդ ոտիւք իմովք զալար եւըս եւ խիտ..
Խուն ինչ աճիւն էր բաւական։

Ո՜չ, ոչ. 'ի լուսաւոր առնել երիս քայլս ըզփոշւով,
Ոչ ըզլոյսն այն անհուն ածէր բընաւ Աստուած 'ի գոյ,
Ըզհոգին յերկարհայեաց՝ դիւցազնաբար հանդիսացեալ.
Ի նանիր ըզցուրտ վիմաւս այսուիկ նայեաց մեր անկանի.
Ո՜վ լաւութիւն, զօրաւոր քան ըզշիրիմ է քո տեսիլ,
Եւ քան ըզմահ իսկ յայտնագոյն։

Et mon œil, convaincu de ce grand témoignage,
Se releva de terre et sortit du nuage,
Et mon cœur ténébreux recouvra son flambeau.
Heureux l'homme à qui Dieu donne une sainte mère!
En vain la vie est dure et la mort est amère:
Qui peut douter sur son tombeau?

LAMARTINE

Եւ ակն իմ՝ հաւանեալ մեծաւդ այդուիկ վկայութեամբ՝
Յարուցեալ ամբարձաւ յերկրէ 'ի վեր եւ ել յամպոյն,
Եւ սիրտ իմ մըթագնած եգիտ ըզջահ իւր վերըստին։
Երանի՛ առն ում մայր սրբակենցաղ շնորհեաց Աստուած.
Ի զուր վայրապար դըժնեայ են կեանք եւ դառն է մահ.
Ո՞վ զիւր շիրմաւն երկբայեսցի։

ԼԱՄԱՐԹԻՆ

AUX ARBRES

Arbres de la forêt, vous connaissez mon âme!
Au gré des envieux, la foule loue et blâme;
Vous me connaissez, vous! vous m'avez vu souvent,
Seul dans vos profondeurs, regardant et rêvant.
Vous le savez, la pierre où court un scarabée,
Une humble goutte d'eau de fleur en fleur tombée,
Un nuage, un oiseau, m'occupent tout un jour.
La contemplation m'emplit le cœur d'amour.
Vous m'avez vu cent fois, dans la vallée obscure,
Avec ces mots que dit l'esprit à la nature,
Questionner tous bas vos rameaux palpitants,
Et du même regard poursuivre en même temps,
Pensif, le front baissé, l'œil dans l'herbe profonde,
L'étude d'un atome et l'étude du monde.
Attentif à vos bruits qui parlent tous un peu,
Arbres, vous m'avez vu fuir l'homme et chercher Dieu!
Feuilles qui tressaillez à la pointe des branches,
Nids, dont le vent au loin sème les plumes blanches,
Clairières, vallons verts, déserts sombres et doux,
Vous savez que je suis calme et pur comme vous.
Comme au ciel vos parfums, mon culte à Dieu s'élance,
Et je suis plein d'oubli comme vous de silence!

ԱՌ ԾԱՌՍ

Ո՜վ ծառք անտառին, դուք զհոգին իմ ճանաչէք.
Ըստ հաճոյս նախանձոտաց գովէ ամբոխն եւ պարսաւէ.
Զիս դուք ճանաչէք. յաճախակի տեսէք դուք զիս
Ի խորութիւնս ձեր մենիկ, ակնակառոյց եւ յերազող.
Գիտէք դուք քաջ զի ապառաժ վէմն յոր զեռեալ վազէ բզէզ,
Ծաղկէ 'ի ծաղիկ հոսեալ ջրոյ կաթիլ խոնարհ,
Ամպ երկնից, թռչնակիկ՝ զիս զբաղեն զօրն ի բուն.
Լնու զսիրտ իմ սիրով նկատութիւն երեւելեաց.
Դուք զիս հարիւր անգամ տեսէք նսեմաստուեր 'ի ծմակին,
Բանիւք ասացուածոց զոր միտք ասեն առ բնութիւն,
Հարցափորձեալ մեղմաձայն զշարժուն ձեր զսաղարթս,
Եւ նովին հայեցուածով կրկնեալ 'ի նմին ժամանակի,
Մտախոհ, ճակատ կքեալ, ակն 'ի խորին 'ի դեղ գալար՝
Ուսումն հիւլէին զոյգ եւ յուսումն տիեզերց.
Մտադիր առ ձայնս ձեր՝ որ խօսին խուն մի համօրէնք՝
Ծառք՝ 'ի խնդիր զիս Աստուծոյ տեսէք խուսեալ 'ի մարդկանէ.
Տերեւք՝ որ 'ի ծայր ոստոց սարսռայք երերագինք,
Բոյնք՝ զոյց փետուրս սպիտակս հողմն ցանէ 'ի հեռաստան,
Բացավայրք, հովիտք կանաչք, քաղցր եւ նսեմ ամայութիւնք,
Գիտէք դուք զի ես անխռով որպէս զձեզ եմ եւ մաքուր.
Զերդ բուրմունք ձեր ընդ երկինս, իմս առ Աստուած սլանայ պաշտօն.
Եւ լի եմ մոռացմամբ որպէս եւ դուքդ լռութեամբ.

La haine sur mon nom répand en vain son fiel;
Toujours, — je vous l'atteste, ô bois aimés du ciel ! —
Jai chassé loin de moi toute pensée amère,
Et mon cœur est encor tel que le fit ma mère !

Arbres de ces grands bois qui frissonnez toujours,
Je vous aime, et vous, lierre au seuil des antres sourds,
Ravins où l'on entend filtrer les sources vives,
Buissons que les oiseaux pillent, joyeux convives;
Quand je suis parmi vous, arbres de ces grands bois,
Dans tout ce qui m'entoure et me cache à la fois,
Dans votre solitude où je rentre en moi-même,
Je sens quelqu'un de grand qui m'écoute et qui m'aime !

Aussi, taillis sacrés où Dieu même apparaît,
Arbres religieux, chênes, mousses, forêt,
Forêt ! c'est dans votre ombre et dans votre mystère,
C'est sous votre branchage auguste et solitaire,
Que je veux abriter mon sépulcre ignoré,
Et que je veux dormir quand je m'endormirai.

Juin 1843

VICTOR HUGO

Ընդունայն զանուամբ իմով հեղու զլեղին ատելութիւն ,
Միշտ , – զայն վըկայեմ ձեզ՝ սիրելի՛քդ երկնից անտառք .–
Ցինէն ի բաց վանեցի ըզդառնութեան զամէն խորհուրդ ,
Եւ սիրտ իմ մինչեւ է տակաւ , որպէս արարն ըզնա իմ մայր ։

Ծառք մեծ մայրեացս այսոցիկ՝ որ միշտ սարսռայք քըստմնածածան՝
Սիրեմ ըզձեզ , եւ դուք՝ բաղեղն 'ի սեամըս խուլ քարանձաւաց ,
Ձորք՝ ուր լինի կենդանահոս աղբերց բըղխումըն լըսելի ,
Թուփք՝ զոր թըռչունք՝ կոչնականք զըւարթագինք՝ առնուն աւար .
Յորժամ ես կամ 'ի միջի ձերում, ծառք մեծ այս անտառաց ,
Յամենայն որ շուրջ պատէն զիս եւ ծածկէն միանգամայն ,
Ի մենութեանդ յոր 'ի սըրտիս իմում լինիմ ես մըտախոհ՝
Ըզգամ զի մեծ ոք ունկընդիր կայ ինձ անդէն եւ զիս սիրէ ։

Վասն որոյ թուփք նըւիրականք ուր երեւի Աստուած ինքնին՝
Ծա՛ռք կըրօնականք , կաղնիք , մամուռք դուք եւ անտառ ,
Անտա՛ռ . . ես յըստուերի քում եւ 'ի քոյդ ի խորհըրդեան՝
Ընդ մեծաշուք եւ մենաւոր քոյ սաղարթուցըդ հովանեաւ ,
Կամիմ պատըսպարել զանգիտացեալն իմ ըզշիրիմ ,
Եւ 'ի քուն լինել կամիմ յորժամ անկայց ես ըզքընով ։

Յունիս 1843 .

ՎԻԿՏՈՐ ՀԻԻԿՈՅ

PAROLES DANS L'OMBRE

Elle disait: «C'est vrai, j'ai tort de vouloir mieux;
Les heures sont ainsi très-doucement passées;
Vous êtes là; mes yeux ne quittent pas vos yeux,
Où je regarde aller et venir vos pensées.

«Vous voir est un bonheur; je ne l'ai pas complet.
Sans doute, c'est encor bien charmant de la sorte!
Je veille, car je sais tout ce qui vous déplaît,
A ce que nul fâcheux ne vienne ouvrir la porte;

«Je me fais bien petite, en mon coin, près de vous;
Vous êtes mon lion, je suis votre colombe;
J'entends de vos papiers le bruit paisible et doux;
Je ramasse parfois votre plume qui tombe;

«Sans doute, je vous ai; sans doute je vous voi.
La pensée est un vin dont les rêveurs sont ivres,
Je le sais; mais. pourtant, je veux qu'on songe à moi.
Quand vous êtes ainsi tout un soir dans vos livres,

«Sans relever la tête et sans me dire un mot,
Une ombre reste au fond de mon cœur qui vous aime;
Et, pour que je vous voie entièrement, il faut
Me regarder un peu, de temps en temps, vous-même.»

Paris, Octobre 18 . . .

VICTOR HUGO

ԽՕՍՔ ՅԸՍՏՈՒԵՐԻ

Ասէր . «Ստոյգ է, խընդրել ըղձալագոյնն ինձ չէ իրաւ.
Ժամքն այսօրինակ յոյժ քաղցրագոյնըս անցանեն.
Այդըր կաս դու. աչք իմ բընաւ ոչ հեռանան յաչաց քոյոց՝
Ուրանօր ես զերթեւեկ տեսանեմ քոց մըտածութեանց։

«Երանութիւն է տեսանել զքեզ. զայն չունիմ լի կատարեալ.
Չիք տարակոյս թէ համայն այսպէս լինելն եւս է հեշտին։
Հըսկեմ ես, զի զամենայն գիտեմ որ քեզն է անհաճոյ,
Զի մի՛ զդուռըն ոք բընաւ ծանրատաղտուկ գայցէ բանալ։

«Ամփոփեալ փոքրըկանամ յանկեան խմուլ ես մօտ առ քեզ.
Առիւծն իմ ես դու եւ ես քոյինդ եմ աղաւնեակ.
Լըսեմ ըզքարտիսից քոյոց ըզձայն մեղմ եւ անոյշ.
Է՛ զի ժողովեմ ես ըզգըրիչդ անկեալ յերկիր։

«Անշուշտ ունիմ ես ըզքեզ. անշուշտ ըզքեզ ես տեսանեմ։
Մըտածութիւնն է գինի՝ ւր յերազողքըն արբենան,
Գիտեմ զայդ, բայց սակայն կամիմ զի զիս ածցես ի միտ։
Յորժամ զողջոյն երեկունն այսպէս 'ի գիրսդ ես ընկըղմեալ,

«Առանց ըզգլուխդ ամբառնալոյ եւ ոչ ինձ բան մի ասելով,
Ըստուեր ինչ մընայ 'ի խոր սըրտիս որ զքեզ սիրէն.
Եւ որպէս զի ես ըզքեզ բոլորովին նըկատեցեմ,
Պարտ է եւ քեզ մերթ ընդ մերթ հայել սակաւ մի եւ առ իս։»

Բարիզ, Հոկտեմբեր 18 . . .

ՎԻԿՏՈՐ ՀԻՒԿՈՅ

LE MEILLEUR MOMENT DES AMOURS

Le meilleur moment des amours
N'est pas quand on a dit: Je t'aime.
Il est dans le silence même
A demi rompu tous les jours;

Il est dans les intelligences
Promptes et furtives des cœurs;
Il est dans les feintes rigueurs
Et les secrètes indulgences;

Il est dans le frisson du bras
Où se pose la main qui tremble,
Dans la page qu'on tourne ensemble,
Et que pourtant on ne lit pas.

Heure unique où la bouche close
Par sa pudeur seule en dit tant!
Où le cœur s'ouvre en éclatant
Tout bas, comme un bouton de rose.

Où le parfum seul des cheveux
Paraît un faveur conquise . . .
Heure de la tendresse exquise
Où les respects sont des aveux!

SULLY PRUDHOMME

ՍԻՐՈՅ ՎԱՅՐԿԵԱՆՆ ՀԵՇՏԱԳՈՅՆ

Սիրոյ վայրկեանն հեշտագոյն,
Չէ երբ ասեմք. «Զքեզ սիրեմ.»
Ի լռութեան խիկ է բուն
Կէս ընդհատեալ զօր ամէն։

Յիմացութիւնս անդ է այն
Սրտից՝ յարագս եւ գաղտնս.
Ի խստութեանց կեղծաւորան
Եւ 'ի ծածուկ 'ի ներմունս։

Է 'ի սարսուռ անդ բազկին
Ուր դողդոջուն ձեռն հանգչի,
Յէջ դարձուցեալ միասին
Որ սակայն ոչ վերծանի։

Մէն ժամ յորում մունջ բերան
Շիկնեալ լոկ՝ զինչ ոչ խօսի.
Յոր սիրտ պայթեալ մեղմ 'ի ձայն՝
Բանի կոկոն զերդ վարդի։

Յոր ըստացեալ շնորհք թուին
Վարսից անոյշ սոսկ բուրմունք...
Ժամ գորովից հեշտային՝
Յոր են յարգանքն՝ յայտնութիւնք։

ՍԻՒԼԼԻ ԲՐԻՒՏՕՄ

7596·57

'TIS THE LAST ROSE OF SUMMER

'Tis the last rose of summer,
  Left blooming alone:
All her lovely companions
  Are faded and gone;
No flowers of her kindred,
  No rosebud is nigh,
To reflect back her blushes,
  Or give sigh for sigh!

I'll not leave thee, thou lone one,
  To pine on the stem;
Since the lovely are sleeping,
  Go, sleep thou with them.
Thus kindly I scatter
  Thy leaves o'er the bed,
Where thy mates of the garden
  Lie scentless and dead.

So soon may I follow,
  When friendships decay,
And from love's shining circle
  The gems drop away!
When true hearts lie wither'd,
  And fond ones are flown,
Oh! who would inhabit
  This bleak world alone?

THOMAS MOORE

Է ՅԵՏԻՆ ՎԱՐԴՆ ԱՄԱՐԱՆ

Է յետին վարդն ամարան
Մնացեալ մենիկ 'ի ծաղկին․
Սիրուն ընկերք իւր համայն
Թառամեցան եւ անցին․
Ոչ բնաւ ծաղկունք համասեռք,
Ոչ վարդի մօտ կայ կոկոն՝
Շիկնել յերփնիցն անդրադարձ՝
Կամ տալ հառաչ առ հառաչ։

Մենիկդ՝ ըզքեզ ո՛չ թողից
Թօշնեալ խամրել ըզցօղնով․
Քանզի սիրունքն 'ի քուն կան,
Ե՛րթ դու ննջեա ընդ նոսին․
Զտերեւսդ այսպէս սիրաբար,
Ըզքնարանաւ ես սըփռեմ,
Ուր քո ընկերք պարտիզին
Դընին անհոտք անկենդան։

Գո՛յր եւ ինձ հուպ գնալ ըզհետ
Երբ մտերմութիւնք նըւաղին,
Ու՛ի սիրոյ շող շըրջանէն
Ականքն 'ի բաց թօթափին։
Երբ սիրտք ըստոյգք կան թառամք
Եւ սիրելիք ոչ եւս են,
Ո՛հ ո՛վ բնակել կամիցի
Մենիկ յաշխարհս այս նըսեմ։

ԹՈՎՄԱՍ ՄՈՒՐ

Il lui disait: «Vois-tu, si tous deux nous pouvions,
L'âme pleine de foi, le cœur plein de rayons,
Ivres de douce extase et de mélancolie,
Rompre les mille nœuds dont la ville nous lie;
Si nous pouvions quitter ce Paris triste et fou,
Nous fuirions; nous irions quelque part, n'importe où,
Chercher loin des vains bruits, loin des haines jalouses,
Un coin où nous aurions des arbres, des pelouses;
Une maison petite avec des fleurs, un peu
De solitude, un peu de silence, un ciel bleu,
La chanson d'un oiseau qui sur le toit se pose,
De l'ombre; - et quel besoin avons-nous d'autre chose?»

Juillet 18...

VICTOR HUGO

Ասէր ցնա· Տես, թէ հնար ինչ էր արդեօք մեզ երկոցուն՝
Հոգիքս հաւատով՝ եւ ճաճանչիւք սիրտք մեր լցեալք՝
Արբեալք քաղցրախառըն հիացմամբ եւ թախծանօք՝
Խորտակել ըզբիւր կապանս որովք քաղաքն ըզմեզ կապէ·
Թէ կարելի էր մեզ թողուլ ըզտըխրալից զայդ խօլ Բարիզ,
Խոյս տըւեալ երթայաք 'ի վայր ուրեք, չէ ինչ փոյթ ուր,
Խընդրել 'ի սին գոչմանց հեռի, 'ի նախանձոտ հեռի ոխից
Անկիւն ուր լիցին մեզ ծառաստանք՝ մարգագետինք,
Ծաղկամբք շուրջանակի գեղազարդեալ տնակ փոքրիկ,
Սակաւ ինչ մենութիւն, լռութիւն խուն, երկին կապոյտ,
Երգ թըռչնոյ որ ըզյարկաւ առնու դադար ճըռուողաձայն,
Ըստուեր . . . եւ զինչ բընաւ այլոյ իրիք լիցին մեզ պէտք:

Յուլիս 18...

ՎԻԿՏՈՐ ՀԻԿՈՅ

Que le sort, quel qu'il soit, vous trouve toujours grande!
Que demain soit doux comme hier!
Qu'en vous, ô ma beauté, jamais ne se repande
Le découragement amer,
Ni le fiel, ni l'ennui des cœurs qui se dénouent,
Ni cette cendre, hélas! que sur un front pâli,
Dans l'ombre, à petit bruit secouent
Les froides ailes de l'oubli!

Laissez, laissez brûler pour vous, ô vous que j'aime!
Mes chants dans mon âme allumés!
Vivez pour la nature, et le ciel, et moi-même!
Après avoir souffert, aimez!
Laissez entrer en vous, après nos deuils funèbres,
L'aube, fille des nuits, l'amour, fils des douleurs,
Tout ce qui luit dans les ténèbres,
Tout ce qui sourit dans les pleurs!

Octobre 18...

VICTOR HUGO

Որ զի՛նչ եւ լիցի բաղդն, ընդքեզ թող միշտ գըտցէ նա մեծ։
Վաղիւն անոյշ որպէս երէկըն լիցի։
Ի քեզ, ո՛վ գեղեցիկդ իմ, ո՛չ երբէք հեղցի ընաւ
Դառնակըսկիծ վըհատութիւնըն հոգւոյ,
Ոչ լեղին եւ ոչ ընաւ ձանձրոյթ սըրտից որ լուծանին,
Եւ ոչ աճիւնն այն, աւա՜ղ, զոր 'ի ճակատ անդ դալկահար,
Ի խաւարի մեղմ 'ի շըշուկ թօթափեն
Անյիշատակ մոռացութեան թեւք ցըրտին։

Թո՛յլ տուր, ո՛վ զոր սիրեմ ես, վասըն քո թո՛յլ տուր վառել,
Նուագաց երգոցըս լուցելոց 'ի հոգիս.
Կեցջի՛ր վասըն բնութեան, վասըն երկնից, եւ վասըն իմ.
Յետ տառապանըս կըրելոյ՝ սիրեսջի՛ր։
Թո՛յլ արա մըտանել 'ի քեզ յետ մեր տըխուր սըգոց,
Այգոյ՝ դըստերըն գիշերաց՝ զոյգ եւ սիրոյ՝ որդւոյն ցաւոց,
Ամենայնի որ յաղջամուղջըս փայլէ,
Ամենայնի որ յարտասուս անդ ժըմտի։

Հոկտեմբեր 18...

ՎԻԿՏՈՐ ՀԻԿՈՅ

Tu peux, comme il te plait, me faire jeune ou vieux.
Comme le soleil fait serein ou pluvieux
L'azur dont il est l'âme et que sa clarté dore,
Tu peux m'emplir de brume ou m'inonder d'aurore
Du haut de ta splendeur, si pure qu'en ses plis
Tu sembles une femme enfermée en un lis,
Et qu'à d'autres moments, l'œil qu'éblouit ton âme
Croit voir, en te voyant, un lis dans une femme.
Si tu m'as souri, Dieu! tout mon être bondit!
Si, Madame, au milieu de tous, vous m'avez dit,
A haute voix: « Bonjour, Monsieur, » et bas: « Je t'aime! »
Si tu m'as caressé de ton regard suprême,
Je vis! je suis léger, je suis fier, je suis grand;
Ta prunelle m'éclaire en me transfigurant;
J'ai le reflet charmant des yeux dont tu m'accueilles;
Comme on sent dans un bois des ailes sous les feuilles,
On sent de la gaieté sous chacun de mes mots;
Je cours, je vais, je ris; plus d'ennuis, plus de maux;
Et je chante, et voilà sur mon front la jeunesse!
Mais que ton cœur injuste, un jour, me méconnaisse;
Qu'il me faille porter en moi, jusqu'à demain,
L'énigme de ta main retirée à ma main:
— Qu'ai-je fait? qu'avait-elle? Elle avait quelque chose.
Pourquoi, dans la rumeur du salon où l'on cause,
Personne n'entendant, me disait-elle *vous?* —
Si je ne sais quel froid dans ton regard si doux

Կարես, զիարդ եւ կամիս, առնել զիս ծեր կամ պատանեակ։
Զոր օրինակ արեգակն առնէ զուարթ կամ անձրեւոտ
Ըզկապոյտն որ է հոգին եւ զոր իւր շող ոսկեզարդէ,
Կարես լնուլ 'ի մըրայլ կամ ողողել զիս յարշալոյս՝
Ի բարձանց պայծառութեան քոյ որ այնչափն է մաքրափայլ,
Մինչեւ 'ի ծալս իւր քեզ թըւել կին 'ի շուշան ինչ ամփոփեալ,
Եւ յայլում ժամանակի աչք՝ զոր հոգի քո զօշոտէ՝
Համարին տեսանել, ըզքեզ տեսեալ, շուշան 'ի կին։
Թէ ժպտեցար, բարբէ, առ իս, խայտայ ամբողջն իմ էութիւն.
Թէ ասացեր 'ի միջի ամենեցուն ինձ դու, Տիկին,
Բարձր 'ի ձայն. «Բարի լոյս, Տէր», եւ «Զքեզ սիրեմ» մեղմ 'ի բարբառ,
Եւ եթէ զիս գըգուեցեր քո երկնաւոր հայեցուածով,
Կեամ ես, թեթեւանամ, հըպարտանամ, մեծանամ ես.
Այլակերպեալ լուսաւորէ տեսանելեաց քոյոց զիս բիբ.
Ըզփիրուն ցոլս ունիմ աչաց որովք դու զիս հիւրընկալես.
Որպէս թեւս ընդ ոստովք իմանայ ոք յանտառ ուրեք՝
Զուարթութիւն ըզգայ մարդ ընդ մէն միով իմոց բանից.
Վազեմ, զընամ, ծիծաղիմ. ոչ եւս տաղտապք, ոչ եւս աղէտք.
Եւ երգեմ, եւ ահա 'ի ճակատուս անդ մանկութիւն։
Բայց թէ սիրտ քո անիրաւ օր մի զիս ոչ ճանաչիցէ,
Թէ ինձ հարկ լինիցի յանձն իմ կրել մինչ 'ի վաղիւ
Զառեղծըւած քում աջոյդ 'ի բաց յիմոյս հեռացելոյ,
— Զի՞նչ արարի. զի՞ էր նըմա։ Անտարակոյս էր նըմա ինչ։
Առ իմե՞ 'ի շըշուկ անդ սըրահին խօսակցութեան,
Ոչ ումեք ականջալուր եղեալ, առ իս նա ասէր դուք. —
Թէ մի չըգիտեմ ցուրտ ընդ քո այնչափ անոյշ նայեաց

A passé comme passe au ciel une nuée,
Je sens mon âme en moi toute diminuée;
Je m'en vais, courbé, las, sombre comme un aïeul;
Il semble que sur moi, secouant son linceul,
Se soit soudain penché le noir vieillard Décembre;
Comme un loup dans son trou, je rentre dans ma chambre.
Le chagrin — âge et deuil, hélas! ont le même air —
Assombrit chaque trait de mon visage amer,
Et m'y creuse une ride avec sa main pesante.
Joyeux, j'ai vingt-cinq ans; triste, j'en ai soixante.

Paris, Juin 18...

VICTOR HUGO

Նանց իբր անցանէ ամպ ընդ երկին պայծառափայլ,
Ըզգամ ըզհոգիս պակասեալ յիս բոլորովին.
Մեկնիմ ես, կորաքամակ, խոնջ եւ տըխուր զերդ այր զառամ.—
Եւ իբր այն թէ զպատանս իւր 'ի վերայ իմ թօթափեալ
Սեաւ ծերունին Դեկտեմբեր յանկարծ զինեւ խոնարհեցի.
Որպէս գայլ յւրն 'ի փապար՝ մտանեմ անդրէն ես յիմ սենեակ։
Վիշտ – հասակ եւ սուգ, աւաղ, ունին զնոյն կերպարան—
Մըթագնէ զիւրաքանչիւր գիծ երեսացըս դառնութեան,
Եւ իւրով ծանու ձեռամբ խորեալ պեղէ խորշ ինչ 'ի նմա։
Ի խինդ՝ քըսան եւ հինգ ամաց եմ, եւ 'ի սուգ՝ վաթսուն ամաց։

Բարիզ, Յունիս 18...

ՎԻԿՏՈՐ ՀԻՒԿՈՅ

Un jour au mont Atlas les collines jalouses
Dirent: « Vois nos prés verts, vois nos fraîches pelouses,
Où vient la jeune fille errant en liberté,
Chanter, rire et rêver après qu'elle a chanté;
Nos pieds que l'Océan baise en grondant à peine,
Le sauvage Océan! notre tête sereine,
A qui l'été de flamme et la rosée en pleurs
Font tant épanouir de couronnes de fleurs!

Mais toi, géant! d'où vient que sur ta tête chauve
Planent incessamment des aigles à l'œil fauve?
Qui donc, comme une branche où l'oiseau fait son nid,
Courbe ta large épaule et ton dos de granit?
Pourquoi dans tes flancs noirs, tant d'abîmes pleins d'ombre?
Quel orage éternel te bat d'un éclair sombre?
Qui t'a mis tant de neige et de rides au front?
Et ce front, où jamais printemps ne souriront,
Qui donc le courbe ainsi? quelle sueur l'inonde?... »

Atlas leur répondit: « C'est que je porte un monde. »

Avril 1830.

VICTOR HUGO

Ասայլին օր մի ցըլեառն Ատլաս բըլուրք նախանձաբեկք·
« Տե՛ս ըզկանաչ մեր արօտս, ըզմեր դալար մարգագետինս,
Ուր գայ աղջիկ ծաղկահասակ ազատաձեմ թափառելով,
Երգել, ծիծաղել եւ յերազել յետ երգելոյն·
Տե՛ս զոտըս մեր, զոր Ովկիան համբուրէ զուն ուրեք յորոտ,
Վայրենի՜ն Ովկիան· տե՛ս ըզզըւարթ ըզմեր գըլուխ,
Ուր ամառըն բոցեղէն եւ ցօղ չաղից արտասուաթոր
Այնչափ պըսակըս ծաղկանց տան բողբոջել փըթթենազարդ։»

« Իսկ դու՝ հըսկայդ՝ զիա՞րդ իցէ զի ըզճաղատ ըզքո գըլխով
Անդադար չիկադոյն ակամբ արծուիք թեւապարեն·
Ո՞վ ոք աղէ իբր ըզճիւղ ուր թըռչնիկն չինէ զիւր բոյն՝
Հակէ զուս քո լայնարձակ եւ զքո քամակըդ վիմարդեայ·
Հեմ 'ի կողըդ սեւաթոյրս այնքան անդունդք ըստուերամածք·
Ո՞ր այն մըրրիկ յաւերժական ըզքեզ 'ի տխուր կոծէ փայլակ·
Ո՞վ ոք եդ 'ի ճակատ քոյին այնչափ խորշըս եւ ձիւն,
Եւ ճակատն այն ուր երբէք ոչ ժըմտեսցին բընաւ գարունք·
Ո՞վ զայն ուրեմն այսպէս կըքէ։ Ո՞ր քիրտըն զայն ողողանէ։»

Պատասխանի ետ Ատլաս· « Բանզի զաշխարհ մի ես կըրեմ։»

Ապրիլ 1830·

ՎԻԿՏՈՐ ՀԻԻԿՈՅ

ECRIT AU BAS D'UN CRUCIFIX

Vous qui pleurez, venez à ce Dieu, car il pleure.
Vous qui souffrez, venez à lui, car il guérit.
Vous qui tremblez, venez à lui, car il sourit.
Vous qui passez, venez à lui, car il demeure.

Mars 1842.

VICTOR HUGO

ԳՐԵԱԼ ԱՌ ՈՏՍ ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ

Որ լայքդ՝ եկայք դուք առ Աստուած այս, քանզի լայ.
Որ կրէք ցաւս՝ եկայք առ Նա, զի բժշկէ.
Որ կայքդ 'ի դող՝ եկայք առ Նա, քանզի ժպտի.
Որ անցանէքդ՝ եկայք առ Նա, քանզի մնայ։

Մարտ 1842.

ՎԻԿՏՈՐ ՀԻՒԿՈՅ

EGLOGUE

Nous errions, elle et moi, dans les monts de Sicile.
Elle est fière pour tous et pour moi seul docile.
Les cieux et nos pensers rayonnaient à la fois.
Oh! comme aux lieux déserts les cœurs sont peu farouches!
Que de fleurs aux buissons, que de baisers aux bouches,
Quand on est dans l'ombre des bois!

Pareils à deux oiseaux qui vont de cime en cime,
Nous parvînmes enfin tout au bord d'un abîme.
Elle osa s'approcher de ce sombre entonnoir;
Et, quoique mainte épine offensât ses mains blanches,
Nous tâchâmes, penchés et nous tenant aux branches,
D'en voir le fond lugubre et noir.

En ce même moment, un titan centenaire,
Qui venait d'y rouler sous vingt coups de tonnerre,
Se tordait dans ce gouffre où le jour n'ose entrer;
Et d'horribles vautours au bec impitoyable,
Attirés par le bruit de sa chute effroyable,
Commençaient à le dévorer.

Alors, elle me dit: « J'ai peur qu'on ne nous voie!
Cherchons un antre afin d'y cacher notre joie!
Vois ce pauvre géant! nous aurions notre tour!
Car les Dieux envieux qui l'ont fait disparaître,
Et qui furent jaloux de sa grandeur, peut-être
Seraient jaloux de notre amour! »

Septembre 18...

VICTOR HUGO

ԳԵՂՕՆՔ

Ի լերինս Սիկիլիոյ թափառէաք նէ եւ ես ·
Վէս է առ այլս ամենեսեան ուառ իս միայն հեզ եւ համբոյր ·
Շողշողէին միանգամայն երկինք եւ մեր մտածութիւնք ·
Ո՜հ երբ 'ի վայրս ամայութեան սիրտք են նուազ վայրենականք ·
Որքանիք ծաղկունք 'ի թուփս եւ ի բերանս որքան համբոյրք
Յորժամ կայցեմք 'ի հովանիս անտառաց ։

Նմանք երկուց թռչնեկաց սաւառնելոց սարէ 'ի սար ,
Ուր ուրեմն հասաք մօտ իսկ անդէն յեզր անդնդոց ։
Իշխեաց նէ մերձենալ 'ի խորխորատըն խաւարչուտ ·
Եւ թէպէտ փուշք խուռնախիտք զըսպիտակ ձեռսըն խոցէին ,
Ջանացաք , խոնարհեալք եւ բուռն հարեալ ըզսաղարթուց ,
Հայել 'ի տխուր եւ սեաւ յատակըս նորուն ։

Ի նըմին վայրկենի հարիւրամեայ ծեր ոք Տիտան ,
Որ անդ էր այն ինչ թաւալեալ 'ի քսան շանթից կայծակնահար ,
Գալարէր 'ի վըհին ուր թափանցել ոչ իշխէ տիւ ·
Եւ անգեղք սոսկալիք 'ի յանողորմ զինեալ կտուց ,
Հրաւիրեալք 'ի ձայնէ ահագնագոռ անկման իւրոյ ,
Զինքըն լափել անդէն ըսկըսըն առնէին ։

Յայնժամ ասաց ցիս · « Խիթամ զի մի գուցէ տեսցեն ըզմեզ ·
Խընդրեսցուք ուրեք անձաւ՝ ծածկել ըզխինդ մեր անդանօր ·
Տես ըզհէք դու զայդ Տիտան · նոյն անցք ուղիղ մեզ անցանիցեն ·
Զի Աստուածք նախանձոտք որ բընաջինջ զինքն արարին՝
Եւ ընդ նորուն խանդացին ընդ մեծութիւնըն չարակնեալ՝
Նախանձաբեկք լիցին թերեւս ընդ մեր սէր ։ »

Սեպտեմբեր18...

ՎԻԿՏՈՐ ՀԻՒԿՈՅ

STANZAS TO...

When all around grew drear and dark,
And reason half withheld her ray—
And hope but shed a dying spark
Which more misled my lonely way;

In that deep midnight of the mind,
And that internal strife of heart,
When dreading to be deem'd too kind,
The weak despair—the cold depart;

When fortune changed—and love fled far,
And hatred's shafts flew thick and fast,
Thou wert the solitary star,
Which rose, and set not to the last.

Oh! blest be thine unbroken light!
That watch'd me as a seraph's eye,
And stood between me and the night,
For ever shining sweetly nigh.

And when the cloud upon us came,
Which strove to blacken o'er thy ray—
Then purer spread its gentle flame,
And dash'd the darkness all away.

ՏԱՂ ԱՌ…

Երբ շուրջ բընաւք եղեն տըխուր եւ մըթին,
Եւ զճառագայթ իւր կէս արգել բանն յինէն,
Եւ յոյսն հեղոյր առկայծ նըշոյլ մի միայն՝
Որ զմենաւորն իմ խոտորէր եւս ըղաւհ։

Ի հասարակ 'ի խոր գիշերն այն մըտաց,
Եւ 'ի ներքին յայն մաքառումն սըրտի՝
Երբ զանգիտեալ զի մի թուեսցին յոյժ գըթածք՝
Յուսահատին տըկարք՝ եւ ցուրտք հեռանան։

Երբ շըրջեցաւ բաղդն եւ 'ի բաց խուսեաց սէր,
Ատելութեան թըռեան փըքինք հոծք եւ պինդք,
Մենաւորիկըն դու էիր աստղ անդէն
Որ յարուցեալ եւ ոչ եմուտ մինչ 'ի սպառ։

Օրհնեալ լիցի մըշտապայծառ ո՜հ քո լոյս,
Որ սրովբէին հանգոյն ական հըսկեաց ինձ,
Եւ ընդ գիշեր կանգնեալ եկաց եւ ընդ իս,
Ճառագայթեալ քաղցրիկ ինձ մօտ հանապազ։

Եւ երբ զիմեալ ամպն 'ի վերայ մեր եհաս
Որ նըշուլիցդ ածել նըսեմ գործեաց գուն,
Պայծառագոյն յայնժամ սփռեաց զիւր հեշտ բոց
Ու 'ի բաց մերժեալ վանեաց համակ ըղխաւար։

Still may thy spirit dwell on mine,
And teach it what to brave or brook—
There's more in one soft word of thine
Than in the world's defied rebuke.

Thou stood'st, as stands a lovely tree,
That still unbroke, though gently bent,
Still waves with fond fidelity
Its boughs above a monument.

The winds might rend, the skies might pour
But there thou wert—and still wouldst be
Devoted in the stormiest hour
To shed thy weeping leaves o'er me.

But thou and thine shall know no blight,
Whatever fate on me may fall;
For heaven in sunshine will requite
The kind—and thee the most of all.

Then let the ties of baffled love
Be broken—thine will never break;
Thy heart can feel—but will not move,
Thy soul, though soft, will never shake.

And these, when all was lost beside,
Were found and still are fix'd in thee;—
And bearing still a breast so tried,
Earth is no desert—ev'n to me.

LORD BYRON

Թող բնակեսցէ ոգիդ 'ի յիմս յարաժամ,
Եւ ուսուսցէ զոր պարտ է կրել կամ խոտել.
Գոյ առաւել ինչ 'ի մի բան քո անոյշ
Քան յաշխարհիս պարսաւ՝ ում ունչս առնեմ ես։

Կայիր կանգուն՝ որպէս կայ ծառ սիրունակ
Որ միշտ անբեկ՝ թէպէտ մեղմիկ կորացեալ՝
Հաւատարիմ յար 'ի գորով կաթոգին
Զմահարձանաւ ճօճէ զտերեւսն 'ի տատան։

Մարթ էր հողմոց պայթիլ, տեղալ երկնից տեղ,
Սակայն էիր դու անդ եւ դարձեալ լիցիս,
Ի մրրկայոյզ եւս 'ի ժամուն՝ անձնուէր
Զարտասուաթոր սաղարթս հեղուլ զքո զինեւ։

Այլ դու եւ քոյքդ մնասջիք անթարշամք,
Որ զինչ եւ է բաղդ 'ի վերայ իմ անկցի.
Քանզի երկինք ընդլոյս արփւոյն տացեն վարձ
Բարեաց — եւ քեզ քան զայլս ամէն առաւել։

Դերեւացեալ սիրոյ բեկցին թող հանգոյցք,
Բընաւ երբէք քոյինքդ ոչ խզեսցին.
Սիրտ քո կարէ զգածիլ՝—բայց ոչ դըրդուեսցի,
Հոգիդ թէպէտ գիրգ՝ խախտեսցի երբէք ոչ։

Եւ այդոքիկ, երբ շուրջ կորեաւ ամենայն,
Գըտան եւ ցարդ իսկ հաստատեալք կան 'ի քեզ,
Եւ թէպէտ միշտ բազմաչարչար կըրեմ ծոց՝
Չէ անապատ երկիր՝ — վասն իմ իսկ անգամ։

ԼՈՐՏ ՊԱՅՐԸՆ

Is thy face like thy mother's, my fair child!
Ada! sole daughter of my house and heart?
When last I saw thy young blue eyes, they smiled,
And then we parted, —not as now we part,
But with a hope. —
Awaking with a start,
The waters heave around me; and on high
The winds lift up their voices; I depart,
Whither I know not; but the hour's gone by,
When Albion's lessening shores could grieve or glad mine eye.

Once more upon the waters! yet once more!
And the waves bound beneath me as a steed
That knows his rider. Welcome to their roar!
Swift be their guidance, wheresoe'er it lead!
Though the strain'd mast should quiver as a reed,
And the rent canvas fluttering strew the gale,
Still must I on; for I am as a weed,
Flung from the rock, on Ocean's foam, to sail
Where'er the surge may sweep, the tempest's breath prevail.

LORD BYRON

Դէմքդ լինի՞ մօրըդ դիմաց նըմանի՞ք ով իմ աղուոր մանկիկ ,
Ադա՜ դու միակ դըստրիկ սըրտիս իմոյ եւ տան ։
Երբ վերջին անգամ տեսի զկապոյտ աչկունդ ըզմանկական՝
Ժըմտէին նոքա , եւ անդ անջատեցաք մեք 'ի միմեանց—
Սակայն ոչ որպէս քակեալ անջատիմք այժմ, այլ յուսով ... —

Զարթուցեալ ընդոստ , եւ ջուրք կուտակին շուրջ զինեւ ահա .
Ամբառնան 'ի վեր ըզձայնս իւրեանց հողմունք անդ 'ի բարձունս .
Մեկնեալ երթամ՝ չըգիտեմ յուր . այլ ժամանակն անցեալ գընաց ,
Յոր տակաւ նըւազելոցն Ալբիոնի մարթ էր ափանց
Առնել տըխուր կամ զըւարթ ըզբիբ իմոյ տեսանելեաց ։

Անգամ մի եւս 'ի վերայ ջուրց . համայն անդրէն անգամ մի եւս .
Վազս առեալ ընդ ինեւ խաղան ալիք որպէս նըժոյգ
Որ ըզհեծեալն իւր ճանաչէ ։ Բարեաւ գայցէ մընչիւն նոցին .
Լիցի արագ ուղղութիւն իւրեանց յոր վայր եւ զիս տարցին ։
Թէպէտ կայմըն պիրկ ձըկտեալ իբրեւ զեղեգն երերեսցի՝
Եւ հողմոց խաղալիկ լիցի կըտաւըն պատառեալ ,
Ինձ հարկ է միշտ գընալ յառաջ . քանզի նըման եմ ես խըռուոյ
Անկելոյ 'ի ժայռէն յՈվկիանու փըրփրոց յերես՝
Առ 'ի սահել ծովագնացիկ յոր վայր ուրեք տարցին կոհակք ,
Եւ փոթորկին յաղթահարեալ բըռնացի շունչն ահեղագոչ ։

ԼՈՐՏ ՊԱՅՐԸՆ

10239